

Հայ Կաթողիկէ ժողովրդապետութիւն

Աւստրիա - Österreich

Armenisch-Katholische Kirchengemeinde



Տօն Շողակադի, Շաբաթ, 14.08.2010

Սիրելի Հաւատացեալ ժողովուրդ,

Աստուածածնի սուրբ տօնի նախօրեակին կողգամ շնորհաւորել ձեզ բոլորդ, անխտիր՝

Քրիստոսի Մայրը, մեր ալ մայրն է երկնաւոր, Յիսուսը ինքը երբ այս աշխարհէն պիտի մեկնէր, խաչի վրայ նոյն իսկ, չմոռցաւ մեզ այլ յանձնեց մեզ, մեզմէ ամէն մեկս, իր մօր, Աստուածածնին: Սուրբ Յովհաննէսին ուղղելով իր խօսքը ըսաւ «ահա, մայրդ...» դառնալով Տիրամօր ըսաւ, «ահա, որդիդ...» Ուրեմն մեզմէ ամէն մէկը գաւակն է Մայրամի՛: Սուրբ Կոյսը պէտք է մեր կեանքին մէջ մեծ դեր խաղայ, ինքը մեր մեծագոյն բարէխօսն է իր որդիին Քրիստոսի դիմաց: Ամէն խնդրանք, որ լաւ է մեզի համար, Աստուածային կամ քին համաձայն է ուշ կամ կանուխ կը կատարուի:

Հայ աւանդութեան համաձայն, վաղը սուրբ և անմահ պատարագէն ետք կ'օրհնուին խաղողի ողկոյզները, խաղողը, որմէ կը պատրաստուի գինին և գինին գոյացափոխուելով կը դառնայ, Քրիստոսի սրբարար Մարմնին և Արեան:

Որ տեղ և ուր ալ գտնուինք՝ վաղը պէտք է իբրև Տաղաւար տօն Աստուածածնի, և Օր Տիարն մասնակցինք հոգեփարար սուրբ Պատարագի արարողութեան: (Բացի եթէ հիւանդ էք, հիւանդի կը նայիք, ձեզմէ զատ մէկը չիկայ ու մարդկային օրէն անկարելի է: Այն ատեն Աստուած ներող է որովհետև ինքն է սրտագէտը բոլորին՝

Բարի Վերափոխման Տօն կը մաղթեմ Ձեզի,
Հայր Վահան Վրդ. Յովակիմեան Հոգևոր Հովիւ